Ինչպես կիսվել Աստծո սիրով

Տաիսը չգիտեր ինչ ասեր կամ աներ, բայց նա ուզում էր օգնել:

Կարոլինա Մալդոնադո
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Բոլիվիայում:

Դա մի շոգ առավոտ էր: Տաիսն ու նրա ընկերուհին՝ Կլաուդիան խոսում էին ու ծիծաղում, երբ նրանք քայլում էին ֆուտբոլի դաշտով: Նրանք վերջացրել էին մարմնամարզության դասը և այժմ գնում էին մաթեմատիկայի դասին:

Կրտսեր խմբի երեխաների մոտ ընդմիջում էր: Տաիսը նայում էր, թե ինչպես էին նրանք խաղում:

Ապա նա նկատեց մի փոքրիկ աղջկա, ով միայնակ կանգնած էր աստիճանների մոտ: Երբ նրանք մոտեցան, Տաիսը նկատեց, որ նա լալիս էր:

Տաիսը թափահարեց ձեռքը կանչելով Կլաուդիային գալ փոքրիկ աղջկա մոտ:

Կլաուդիան խոժոռվեց և գլուխը բացասաբար շարժեց. «Մենք կուշանանք»:

Նախքան Տաիսը կհասցներ մի բան ասել, Կլաուդիան հեռացավ:

Տաիսը նայեց փոքրիկ աղջկան: Նա մոտ հինգ տարեկան էր: Նրա դեմքը թաքցված էր ծնկների միջև և նա ծածկել էր գլուխը իր ձեռքերով:

Տաիսը նստեց նրա կողքին: Աղջիկը մի քիչ մի կողմ քաշվեց:

«Լա՞վ ես»: Մեղմորեն հարցրեց Տաիսը:

Աղջիկը չպատասխանեց: Տաիսը չգիտեր ինչ ասել կամ անել:

«Ինչո՞վ կարող եմ օգնել քեզ»,- հետո հարցրեց նա:

Աղջիկը շարժեց ուսերը:

«Իմ անունը Տաիս է: Անունդ ի՞նչ է»:

Վերջապես աղջիկը նայեց Տաիսին: «Նիկոլ»:

«Ինչո՞ւ ես լալիս Նիկոլ»:

«Բոլորն ինձ ծաղրում են թմբլիկ լինելու համար»,- հեծկլտալով ասաց նա:

Տաիսը սրբեց Նիկոլի երեսը: «Ցավում եմ, որ նրանք ասել են այդ: Նշանակություն չունի, թե ինչ են ասում մարդիկ»:

«Նրանք ասում են ես սիրուն չեմ»:

«Դե, կարծում եմ նրանք սխալվում են»,- ասաց Տաիսը ժպտալով: «Դու շատ սիրունիկ ես և նաև շատ հատուկ: Դու գիտեի՞ր դա»:

Տաիսը մտածեց Երեխաների խմբի իր սիրելի երգերից մեկի մասին: Նա գիտեր ինչ պիտի ասեր այժմ:

ԴԱՄՆԵՐԸ՝ ՏԱԽԻՈ ՈԵՍՈՒՆԻՐ

«Դու Աստծո զավակն ես», - ասաց Տաիսը՝ բռնելով աղջկա ձեռքերը:

Տաիսը մի քիչ զրուցեց Նիկոլի հետ: Նա բացատրեց, թե որքան կարևոր էր Նիկոլը Երկնային Հոր, նրա ընտանիքի և շատ ուրիշների համար, ովքեր այնքան շատ էին սիրում նրան: Կամաց կամաց Նիկոլը սկսեց ժպտալ:

Մի քանի րոպե անց Նիկոլը կանգնեց և ամուր գրկեց Տաիսին: «Շնորհակալություն», - ասաց նա:

Տաիսը նայում էր թե ինչպես էր իր նոր ընկերուհին լայն ժպիտով վազելով հեռանում: Ես ինձ լավ զգացի, որ կարողացա Նիկոլին օգնել ավելի լավ զգալ և իմանալ, թե Աստված որքան շատ է սիրում նրան:

Ապա Տաիսը նույնպես ոտքի ցատկեց: *Ավելի լավ է ես Նիկոլի պես վազեմ, թե չէ կուշանամ մաթեմատիկայից* մտածեց նա՝ ժպտալով, երբ շտապում էր դասի: ●